ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.11.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/196

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Էներջի Գրուպ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ռ. Աղաբեկյանի, ներկայացուցիչներ՝ Ս. Հակոբյանի, Խ. Աբրահամյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-23/1» ծածկագրով գնանշման հարցում, հատուկ մասնագիտական սարքերի և նյութերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 06.11.2019թ. թիվ 26/26-1/18323-2019 գրությամբ «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 01.11.2019թ. թիվ ՊՆ/02/2290-2019 գրության հիման վրա, 06.11.2019թ. «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 07.11.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 13.11.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 13.11.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 29.11.2019թ.-ին:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 01.11.2019թ. թիվ ՊՆ/02/2290-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/1-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգում «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից 2-րդ, 3-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով վերոնշյալ մասնակցին համակարգի (armeps.am) միջոցով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

«Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած և «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-23/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերում առկա էին անհամապատասխանություններ, մասնավորապես՝ «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից չէին ներկայացվել «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող՝ ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերը, այն է՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող

երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը: Ուստի գնահատող հանձնաժողովը 24.10.2019թ., հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը, կասեցրել է նիստը և ծանուցել մասնակցին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ:

Սահմանված ժամկետում «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ն ներկայացրել է փաստաթղթերը, սակայն դրանցում առկա են թերություններ, մասնավորապես՝ ներկայացված պայմանագրերից որպես նմանատիպ համարվող է գնահատվել միայն մեկը, որի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պակաս չէ ընթա¬ցա¬կարգի շրջանակում միայն 6-րդ չափաբաժնի մասով մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 30.10.2019թ. մերժել է «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի հայտը 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով:»:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ներկայացրել են թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-23/1» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կցվել են ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությանը:

3. <u>«Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 06.11.2019թ. գրությամբ դիմել է «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.11.2019թ. թիվ 26/26-1/18323-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում կամ կարծիք:

Ներկայանալով հրավիրված նիստին, Մասնակիցը հայտնել է, որ սահմանված ժամկետում «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ն ներկայացրել է անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ փաստաթղթեր, դրանցում առկա չեն թերություններ, սակայն՝ Հանձնաժողովի կողմից ներկայացված պայմանագրերից որպես նմանատիպ համարվող է գնահատվել միայն մեկը, այն դեպքում, երբ Մասնակցի կողմից ներկայացված են եղել նաև այլ պայմանագրեր ևս, որոնք Հանձնաժողովը չի գնահատել նախկինում նմանատիպ կատարված պայմանագրեր:

4. <u>ՍՑ-LO-2019/196 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հատուկ մասնագիտական սարքերի և նյութերի ձեռքբերման նպատակով 30.09.2019թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-23/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել միայն «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 07.10.2019թ.-ի կայացած նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ 15.10.2019թ.-ի «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-23/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում 2-րդ, 3-րդ և 6-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության 4.2 կետով, Հանձնաժողովը որոշել է «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ին առաջարկել ներկայացնել հրավերով և հայտով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը (մասնագիտական փորձառություն որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթեր) և ՀՀ կառավարության 2017թ.

մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 43-րդ կետի 3-րդ մասի համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Հանձնաժողովի 07.10.2019թ.-ի կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած և «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-23/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից չեն ներկայացվել «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող՝ ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերը, այն է՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը: Ուստի գնահատող հանձնաժողովը 24.10.2019թ., հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը, կասեցրել է նիստը և ծանուցել մասնակցին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ:

Սահմանված ժամկետում «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ն ներկայացրել է փաստաթղթերը, սակայն դրանցում առկա են թերություններ, մասնավորապես՝ ներկայացված պայմանագրերից որպես նմանատիպ համարվող է գնահատվել միայն մեկը, որի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պակաս չէ սույն ընթացակարգի շրջանակում միայն 6-րդ չափաբաժնի մասով մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Ելնելով վերոգրյայից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 30.10.2019թ. մերժել է «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի հայտը 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով:

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>**.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.11.2019թ. թիվ 26/26-1/18323-2019 գրությամբ «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ ենթակետի համաձայն՝ … Գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է՝ հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը …

3) էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

4) էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ … անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Եթե կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը վերաբերում է՝

ա. հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած ժամկետանց հարկային պարտավորություններին, ապա անհամապատասխանությունը համարվում է շտկված, եթե մասնակիցը ներկայացնում է կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը,

բ. «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին, ապա արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացվելու, այնպես էլ՝ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով կոմիտե հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ինչպես նաև էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ Կարգով նախատեսված դեպքերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Ընդ որում, հայտը գնահատվում է բավարար, եթե ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

Այն դեպքում, երբ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում

հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Եթե կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը վերաբերում է՝

ա. հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած ժամկետանց հարկային պարտավորություններին, ապա անհամապատասխանությունը համարվում է շտկված, եթե մասնակիցը ներկայացնում է կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը,

բ. «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին, ապա արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացվելու, այնպես էլ՝ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հատուկ մասնագիտական սարքերի և նյութերի ձեռքբերման նպատակով 30.09.2019թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-

ԳՀԱՊՁԲ-20-23/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ն Հանձնաժողովի 07.10.2019թ.-ի կայացած նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետի հիման վրա ճանաչվել է 2-րդ, 3-րդ և 6-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող:

Նույն արձանագրության 4.2 կետով, Հանձնաժողովը որոշել է «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ին առաջարկել ներկայացնել հրավերով և հայտով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը (մասնագիտական փորձառություն որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթեր) և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 43-րդ կետի 3-րդ մասի համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Հանձնաժողովը 24.10.2019թ.-ի, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը, կասեցրել է նիստը և ծանուցել մասնակցին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ, քանի որ «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ:

Հանձնաժողովի նույն արձանագրության համաձայն՝ սահմանված ժամկետում «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ն ներկայացրել է փաստաթղթերը, սակայն դրանցում առկա են թերություններ, մասնավորապես՝ ներկայացված պայմանագրերից որպես նմանատիպ համարվող է գնահատվել միայն մեկը, որի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պակաս չէ սույն ընթացակարգի շրջանակում միայն 6-րդ չափաբաժնի մասով մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Ելնելով վերոգրյայից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 30.10.2019թ.-ին մերժել է «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի հայտը 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Հանձնաժողովի 07.10.2019թ.-ի կայացած թիվ 4 արձանագրությամբ մանրամասն չի նկարագրվել հայտնաբերված անհամապատասխանությունները: Հանձնաժողովի կողմից արձանագրվելով, որ *«սահմանված ժամկետում «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ն ներկայացրել է փաստաթղթերը, սակայն դրանցում առկա են թերություններ, մասնավորապես՝*

ներկայացված պայմանագրերից որպես նմանատիպ համարվող է գնահատվել միայն մեկը, որի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պակաս չէ սույն ընթացակարգի շրջանակում միայն 6-րդ չափաբաժնի մասով մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից», չի կարող օբյեկտիվորեն թույլ տալ եզրահանգելու, թե Մասնակցի կողմից ներկայացված ո՞ր պայմանագիրը չէր կարող համարվել նմանատիպ և ի՞նչ փաստական հանգամանքներից ելնելով, որպեսզի հետագայում էլ (սույն ընթացակարգի քննության ժամանակ) հնարավոր լիներ փաստելու կամ հերքելու Հանձնաժողովի եզրահանգումը, և վերջապես գնահատելու Մասնակցի՝ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտման փաստը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին Հանձնաժողովի կողմից 07.10.2019թ.-ի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշումն ոչ իրավաչափ է, չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված սկզբունքներից և պահանջներից, հակասում է Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ ենթակետի և Կարգի 46-րդ կետի դրույթներին:

Ուստի, վերոնշյալներով պայմանավորված, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի

«ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.11.2019թ. թիվ 26/26-1/18323-2019 գրությամբ «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/196 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**